# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Սևակ Վարդանյան ԱՁ-ն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/02 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | 1.Մոյա Սեմյա 2. Պետրովսկիե Նիվի 3.Կավկազ Բոնտ | Մակարոնեղեն, համաձայն ԳՕՍՏ 31743-2012 կամ ԳՕՍՏ 31743-2017 ստանդարտացման փաստաթղթի:Մակարոն և/կամ վերմիշել՝ պահանջվող քանակներն ըստ պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրի: Փաթեթավորման մակնշումը լինի ընթեռնելի: Անվտանգությունը փաթեթավորումը և մակնշումը համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Գործարանային փաթեթավորմամբ՝ 3կգ կամ 5կգ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 60 %: Ընդունել ի գիտություն, մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված |

| | | |
|---|---|---|
| | | տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական անձնագրեր: Սննդամթերքի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանությունները շտկելու ժամկետ է սահմանվում 1 օրացուցային օր:Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: " Մատակարարման հստակ օրը կսահմանվի նախապես, պատվիրատուի կողմից, ոչ ուշ քան 3 օրացուցային օր առաջ` պահանջագրով, էլեկտրոնային փոստով: Մատակարարումն անհրաժեշտ է իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրով սահմանված օրը (երկուշաբթի կամ երեքշաբթի), ժամը 8:30-ից մինչև 16:30-ը: Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագիրը և բոլոր մթերքների սերտիֆիկատները ներկայացնել առաջին մատակարարման ժամանակ: Սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված լիազորագրով: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ИП Севак Варданян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/02 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 2 | | |